ՀԱՎԵԼՎԱԾ III

«ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
V ՄԱՍԻ «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ» 3-ՐԴ ԳԼԽԻ

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է սահմանված ժամկետներում աստիճանաբար մոտարկել իր օրենսդրությունը Եվրոպական միության հետևյալ օրենսդրությանը և միջազգային փաստաթղթերին:

Շրջակա միջավայրի կառավարում և շրջակա միջավայրի ինտեգրում քաղաքականության այլ ոլորտներ

«Շրջակա միջավայրի վրա որոշակի պետական և մասնավոր ծրագրերի ազդեցության մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 13-ի 2011/92/ԵՄ հրահանգ՝ փոփոխություններով

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

– Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

– Պահանջների սահմանում, ըստ որոնց սույն հրահանգի I հավելվածի ծրագրերը ենթակա կլինեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, և ընթացակարգի սահմանում, որով կորոշվի, թե սույն հրահանգի II հավելվածի որ ծրագրերի համար կպահանջվի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (4-րդ հոդված)

– Կառուցապատողի կողմից տրամադրվելիք տեղեկատվության շրջանակի սահմանում (5-րդ հոդված)

– Շրջակա միջավայրի հարցերով զբաղվող իշխանությունների հետ խորհրդակցության ընթացակարգի և հանրային խորհրդակցության ընթացակարգի սահմանում (6-րդ հոդված)

- ԵՄ այն անդամ պետությունների հետ տեղեկատվության փոխանակման և խորհրդակցության վերաբերյալ միջոցառումների սահմանում, որոնց շրջակա միջավայրը հավանաբար զգալի ազդեցություն կկրի ծրագրից (7-րդ հոդված)

- Կառուցապատման թույլտվություն ստանալու համար դիմումների վերաբերյալ որոշումների ելքի մասին հանրությանը տեղեկացնելուն ուղղված միջոցառումների սահմանում (9-րդ հոդված)

- Վարչական և դատական մակարդակներում արդյունավետ, չափազանց մեծ ծախսեր չընդգրկող և ժամանակին իրականացվող՝ հանրությանը և ոչ կառավարական կազմակերպություններին ներգրավող՝ վերանայման ընթացակարգերի սահմանում (11-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 2011/92/ԵՄ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում: |

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2001 թվականի հունիսի 27-ի 2001/42/ԵՀ հրահանգ՝ շրջակա միջավայրի վրա որոշակի նախագծերի և ծրագրերի ազդեցության գնահատման մասին

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

- Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

- Ընթացակարգի սահմանում, որով կորոշվի, թե որ նախագծերի և ծրագրերի համար է պահանջվում շրջակա միջավայրի ռազմավարական գնահատում, և պահանջների սահմանում, ըստ որոնց նման գնահատման ենթակա կլինեն այն նախագծերը կամ ծրագրերը, որոնց համար պարտադիր է շրջակա միջավայրի ռազմավարական գնահատումը (3-րդ հոդված)

- Շրջակա միջավայրի հարցերով զբաղվող իշխանությունների հետ խորհրդակցության ընթացակարգի և հանրային խորհրդակցության ընթացակարգի սահմանում (6-րդ հոդված)

– Այն անդամ պետությունների հետ տեղեկատվության փոխանակման և խորհրդակցության վերաբերյալ միջոցառումների սահմանում, որոնց շրջակա միջավայրը հավանաբար զգալի ազդեցություն կկրի նախագծից կամ ծրագրից (7-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 2001/42/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 տարվա ընթացքում: |

Խորհրդի 90/313/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի 2003/4/ԵՀ հրահանգ՝ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիության մասին

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

– Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում,

– Գործնական միջոցառումների սահմանում, որոնց շրջանակում շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի կլինի հանրության համար, և կիրառելի բացառությունների սահմանում (3-րդ և 4-րդ հոդվածներ)

– Այն բանի ապահովում, որ պետական մարմինները շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը հանրության համար հասանելի դարձնեն (3(1) հոդված)

– Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվություն չտրամադրելու կամ միայն մասնակի տեղեկատվություն տրամադրելու մասին որոշումների վերանայման ընթացակարգերի սահմանում (6-րդ հոդված)

– Հանրության շրջանակում շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության տարածման համակարգի ստեղծում (7-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 2003/4/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում: |

Շրջակա միջավայրին վերաբերող որոշակի նախագծերի և ծրագրերի կազմման մասով հանրային մասնակցությունը սահմանող և հանրային մասնակցության և արդարադատության մատչելիության վերաբերյալ Խորհրդի 85/337/ԵՏՀ և 96/61 /ԵՀ հրահանգները փոփոխող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003 թվականի մայիսի 26-ի 2003/35/ԵՀ հրահանգ

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

- Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

- Հանրությանը տեղեկատվության տրամադրում նախատեսող մեխանիզմի (2(2)(a) և 2(2)(d) հոդվածներ) սահմանում

- Հանրային խորհրդակցության մեխանիզմի սահմանում (2(2)(b) և 2(3) հոդվածներ)

- Հանրային մեկնաբանությունները և կարծիքները որոշումների կայացման ընթացքում հաշվի առնելուն ուղղված մեխանիզմի սահմանում (2(2)(c) հոդված)

- Վարչական և դատական մակարդակներում արդյունավետ, ժամանակին իրականացվող և չափազանց մեծ ծախսեր չընդգրկող արդարադատության մատչելիության երաշխավորում հանրության (ներառյալ ոչ կառավարական կազմակերպությունների) համար (3(7) և 4(4) հոդվածներ, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և աղտոտման համատեղ կանխարգելում և վերահսկում)

| |
|---|
| Ժամանակացույց. 2003/35/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում։ |

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/35/ԵՀ հրահանգ՝ շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման և վերականգնման մասով բնապահպանական պատասխանատվության մասին՝ փոփոխություններով

Կիրառվում են 2004/35/ԵՀ հրահանգի հետևյալ դրույթները.

– Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմինների սահմանում

| |
|---|
| Ժամանակացույց. 2004/35/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում։ |

– Շրջակա միջավայրին (ջուր, հող, պաշտպանված տեսակներ և բնական միջավայրեր) հասցվող վնասի կանխարգելմանն ու վերականգնմանն ուղղված կանոնների և ընթացակարգերի սահմանում՝ «աղտոտողը վճարում է» սկզբունքի հիման վրա (5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածներ, II հավելված)

| |
|---|
| Ժամանակացույց. 2004/35/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 8 տարվա ընթացքում։ |

– Վտանգ ներկայացնող մասնագիտական գործունեության համար խիստ պատասխանատվության սահմանում (3(1) հոդված և III հավելված)

| |
|---|
| Ժամանակացույց. 2004/35/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 7 տարվա ընթացքում։ |

– Օպերատորների համար անհրաժեշտ կանխարգելիչ և վերականգնող միջոցներ ձեռնարկելու պարտավորությունների՝ ներառյալ ծախսերի վճարման պատասխանատվության սահմանում (5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 2004/35/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 7 տարվա ընթացքում: |

– Շրջակա միջավայրին հասցված վնասի դեպքում ազդեցություն կրած անձանց կողմից՝ ներառյալ բնապահպանական ոչ կառավարական կազմակերպությունների կողմից, իրավասու մարմիններից գործողությունների ձեռնարկում պահանջելու համար մեխանիզմների (ներառյալ անկախ վերանայման) սահմանում (12-րդ և 13-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 2004/35/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում: |

Օդի որակը

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008 թվականի մայիսի 21-ի 2008/50/ԵՀ հրահանգ՝ Եվրոպայի համար մթնոլորտային օդի որակի և ավելի մաքուր օդի մասին

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

– Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

| |
|---|
| Ժամանակացույց. 2008/50/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 4 տարվա ընթացքում: |

– Գոտիների և ագլոմերացիաների սահմանում և դասակարգում (4-րդ և 5-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 2008/50/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 7 տարվա ընթացքում: |

– Գնահատման վերին և ստորին շեմերի և սահմանային արժեքների սահմանում (5-րդ և 13-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 2008/50/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 7 տարվա ընթացքում: |

– Օդն աղտոտող նյութերի մասով մթնոլորտային օդի որակի գնահատման համակարգի սահմանում (5-րդ, 6-րդ և 9-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 2008/50/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 8 տարվա ընթացքում: |

– Օդի որակի պահպանության պլանների սահմանում այն գոտիների և ագլոմերացիաների համար, որտեղ աղտոտող նյութերի մակարդակները գերազանցում են սահմանային/նպատակային արժեքը (23-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 2008/50/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 8 տարվա ընթացքում: |

– Այն գոտիների և ագլոմերացիաների համար կարճաժամկետ գործողությունների ծրագրերի սահմանում, որոնցում գոյություն ունի զգուշացման շեմերի գերազանցման վտանգ (24-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 2008/50/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 8 տարվա ընթացքում։ |

– Հանրությանը տեղեկատվության տրամադրման համակարգի ստեղծում (26-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 2008/50/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում։ |

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի 2004/107/ԵՀ հրահանգ՝ մթնոլորտային օդում արսենի, կադմիումի, սնդիկի, նիկելի և արոմատիկ բազմացիկլիկ ածխաջրածինների մասին

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

– Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

| |
|---|
| Ժամանակացույց. 2004/107/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում։ |

– Գնահատման վերին և ստորին շեմերի (4(6) հոդված) և նպատակային արժեքների (3-րդ հոդված) սահմանում

| |
|---|
| Ժամանակացույց. 2004/107/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում։ |

– Գոտիների և ագլոմերացիաների սահմանում և դասակարգում (3-րդ և 4(6) հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 2004/107/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում: |

– Օդը աղտոտող նյութերի մասով մթնոլորտային օդի որակի գնահատման համակարգի սահմանում (4-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 2004/107/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 8 տարվա ընթացքում: |

– Համապատասխան աղտոտող նյութերի մասով օդի որակը պահպանելուն/բարելավելուն ուղղված միջոցների ձեռնարկում (3-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 2004/107/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 8 տարվա ընթացքում: |

Որոշակի հեղուկ վառելիքներում ծծմբի պարունակության նվազեցման վերաբերյալ 93/12/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի 1999/32/ԵՀ հրահանգ՝ փոփոխություններով

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

– Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

– Վառելիքի նմուշառման արդյունավետ համակարգի և ծծմբի պարունակության որոշմանն ուղղված վերլուծության համապատասխան անալիտիկ մեթոդների սահմանում (6-րդ հոդված)

– Մազութի և նավթաթորվածքի (գազային յուղի) օգտագործման արգելում այն դեպքում, երբ հողում դրանց կիրառման ժամանակ ծծմբի պարունակությունը գերազանցում է սահմանված սահմանային արժեքները (3(1) հոդված, եթե կիրառելի չեն 3 (2) և 4(1) հոդվածներում նշված բացառությունները)

| |
|---|
| Ժամանակացույց. 1999/32/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում: |

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1994 թվականի դեկտեմբերի 20-ի 94/63/ԵՀ հրահանգ՝ բենզինի պահման և բեռնափոխման կայաններից լցակայաններ դրա մատակարարման արդյունքում առաջացող՝ ցնդող օրգանական միացությունների (ՑՕՄ) արտանետումների նկատմամբ վերահսկողության մասին՝ փոփոխություններով

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

– Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

– Բենզինի պահման և բեռնափոխման բոլոր կայանների հայտնաբերում (2-րդ հոդված)

– Բեռնափոխման կայաններում և լցակայաններում պահեստարաններից և բեռնափոխման կայաններում շարժական կոնտեյներների բեռնման/բեռնաթափման ընթացքում բենզինի կորստի կրճատմանն ուղղված տեխնիկական միջոցների սահմանում (3-րդ, 4-րդ և 6-րդ հոդվածներ և III հավելված)

– Բոլոր ավտոցիստեռների բեռնման կամրջակների և շարժական կոնտեյներների պահանջներին համապատասխանության պահանջի սահմանում (4-րդ և 5-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 94/63/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 8 տարվա ընթացքում: |

1999/13/ԵՀ հրահանգը փոփոխող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/42/ԵՀ հրահանգ՝ որոշակի ներկերում, լաքերում և փոխադրամիջոցների երեսմշակման ապրանքներում օրգանական լուծույթների օգտագործման հետևանքով ցնդող օրգանական միացությունների արտանետումների սահմանափակման մասին

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

– Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

– Ներկերի և լաքերի համար ՑՕՄ-ի առավելագույն պարունակության սահմանային արժեքների սահմանում (3-րդ հոդված և II հավելված)

– Շուկայահանված ապրանքների պիտակավորումը և համապատասխան պահանջներին համապատասխանող ապրանքների շուկայահանումն ապահովող պահանջների սահմանում (3-րդ և 4-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 2004/42/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում: |

Ջրի որակը և պաշարների կառավարումը

Ջրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողությունների շրջանակը սահմանող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2000 թվականի հոկտեմբերի 23-ի 2000/60/ԵՀ հրահանգ՝ փոփոխություններով

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

– Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

- Գետերի ավազանների տարածքների որոշում և համապատասխան համակարգում՝ ուղղված աշխարհի գետերի, լճերի և առափնյա ջրերի պահպանությանը (3(1)-3(7) հոդված)

- Գետերի ավազանների տարածքների բնութագրերի վերլուծություն (5-րդ հոդված)

- Ջրի որակի դիտանցման ծրագրերի ստեղծում (8-րդ հոդված)

- Գետերի ավազանների կառավարման պլանների կազմում, խորհրդակցություններ հանրության հետ և այդ պլանների հրապարակում (13-րդ և 14-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 2000/60/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում։ |

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի 2007/60/ԵՀ հրահանգ՝ հեղեղումների ռիսկերի գնահատման և կառավարման մասին

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

- Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

- Հեղեղման ռիսկի նախնական գնահատման իրականացում (4-րդ և 5-րդ հոդվածներ)

- Հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների կազմում (6-րդ հոդված)

- Հեղեղումների ռիսկի կառավարման պլանների կազմում (7-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 2007/60/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում։ |

Խորհրդի 1991 թվականի մայիսի 21-ի 91/271/ԵՏՀ հրահանգ՝ քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին՝ փոփոխություններով

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

– Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

– Քաղաքային կեղտաջրերի հավաքման և մաքրման իրավիճակի գնահատում

– Զգայուն ոլորտների և ագլոմերացիաների որոշում (5(1) հոդված և II հավելված)

| |
|---|
| Ժամանակացույց. 91/271/ԵՏՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում։ |

– Քաղաքային կեղտաջրերի մաքրման պահանջների իրականացման համար տեխնիկական և ներդրումային ծրագրի կազմում (17(1) հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 91/271/ԵՏՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում։ |

Խորհրդի 1998 թվականի նոյեմբերի 3-ի 98/83/ԵՀ կանոնակարգ (ԵՀ)՝ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին՝ փոփոխություններով

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

- Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում
- Խմելու ջրի ստանդարտների սահմանում (4-րդ և 5-րդ հոդվածներ)
- Դիտանցման համակարգի ստեղծում (6-րդ և 7-րդ հոդվածներ)
- Սպառողներին տեղեկատվության տրամադրման համար մեխանիզմի ստեղծում (13-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 98/83/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 4 տարվա ընթացքում: |

Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի 91/676/ԵՏՀ հրահանգ՝ գյուղատնտեսական աղբյուրներից արտանետվող նիտրատների հետևանքով առաջացող աղտոտման դեմ ջրերի պաշտպանության վերաբերյալ՝ փոփոխություններով

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

- Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում
- Դիտանցման ծրագրերի սահմանում (6-րդ հոդված)
- Աղտոտված կամ վտանգված ջրերի հայտնաբերում և նիտրատների նկատմամբ զգայուն գոտիների սահմանում (3-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 91/676/ԵՏՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 4 տարվա ընթացքում: |

– Պատշաճ գյուղատնտեսական գործելակերպի գործողությունների ծրագրերի և կանոնների սահմանում՝ նիտրատների նկատմամբ զգայուն գոտիների համար (4-րդ և 5-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 91/676/ԵՏՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 8 տարվա ընթացքում: |

Թափոնների կառավարում

Որոշ հրահանգներ ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/98/ԵՀ հրահանգ՝ թափոնների մասին

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

– Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

– Թափոնների կառավարման հինգաստիճան ստորակարգությանը համապատասխան թափոնների կառավարման պլանների և թափոնների առաջացման կանխարգելման ծրագրերի կազմում (V գլուխ)

| |
|---|
| Ժամանակացույց. 2008/98/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 4 տարվա ընթացքում: |

– «Աղտոտողը վճարում է» և արտադրողների ընդլայնված պատասխանատվության սկզբունքներին համապատասխան՝ ծախսերի ամբողջական փոխհատուցման մեխանիզմի սահմանում (14-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 2008/98/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում։ |

- Հեռացման կամ վերականգնման գործողություններ իրականացնող հաստատությունների/ձեռնարկությունների համար թույլտվությունների տրամադրման համակարգի ստեղծում՝ վտանգավոր թափոնների կառավարման գծով հատուկ պարտավորությունների սահմանմամբ (IV գլուխ)

- Թափոնների հավաքման և փոխադրման հաստատությունների և ձեռնարկությունների ռեեստրի ստեղծում (IV գլուխ)

| |
|---|
| Ժամանակացույց. 2008/98/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 4 տարվա ընթացքում։ |

Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի 1999/31/ԵՀ հրահանգ՝ աղբավայրերի մասին՝ փոփոխություններով

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

- Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

- Թափոնների թաղման վայրերի դասակարգում (4-րդ հոդված)

- Աղբավայրեր տեղափոխվող կենսաբանորեն քայքայվող քաղաքային տնտեսության թափոնների քանակը նվազեցնող ազգային ռազմավարության մշակում (5-րդ հոդված)

- Հայտերի և թույլտվությունների համակարգի և թափոնների ընդունման ընթացակարգերի ստեղծում (5-7-րդ, 11-րդ, 12-րդ և 14-րդ հոդվածներ)

– Աղբավայրերի շահագործման փուլում հսկողության և դիտանցման ընթացակարգերի, նաև լքման ենթակա աղբավայրերի համար փակման և վերականգնման ընթացակարգերի սահմանում (12-րդ և 13-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. սույն հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 տարվա ընթացքում: |

– Թափոնների թաղման գոյություն ունեցող վայրերն անհրաժեշտ պայմաններով ապահովելու պլանների մշակում (14-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 1999/31/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում: |

– Ծախսերի ձևավորման մեխանիզմի ստեղծում (10-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 1999/31/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 տարվա ընթացքում: |

– Նախքան աղբավայրում թափվելը համապատասխան թափոնների մաքրման ապահովում (6-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 1999/31/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում: |

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2006 թվականի մարտի 15-ի 2006/21/ԵՀ հրահանգ՝ արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման մասին և 2004/35/ԵՀ հրահանգը փոփոխող, մշակված՝ 2009/335/ԵՀ, 2009/337/ԵՀ, 2009/359/ԵՀ և 2009/360/ԵՀ որոշումներով

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

- Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

- Օպերատորների կողմից թափոնների կառավարման պլանների մշակումն ապահովող համակարգի ստեղծում (թափոնների գործածության օբյեկտների որոշում և դասակարգում. թափոնների բնութագրում) (4-րդ և 9-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 2006/21/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 4 տարվա ընթացքում: |

- Թույլտվությունների, ֆինանսական երաշխիքների և տեսչական համակարգի ստեղծում (7-րդ, 14-րդ և 17-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 2006/21/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 8 տարվա ընթացքում: |

- Հանման հետևանքով առաջացած ստորերկրյա խոռոչների կառավարման և դիտանցման ընթացակարգերի սահմանում (10-րդ հոդված)

- Լեռնահանքարդյունահանման թափոնների գործածության օբյեկտների փակման և փակմանը հաջորդող փուլերի ընթացակարգերի սահմանում (12-րդ հոդված)

- Լեռնահանքարդյունահանման թափոնների գործածության փակված օբյեկտների ցանկի կազմում (20-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 2006/21/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում: |

Բնության պաշտպանություն

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 30-ի 2009/147/ԵՀ հրահանգ՝ վայրի թռչունների պահպանության մասին

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

- Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

- Թռչունների այն տեսակների, որոնց անհրաժեշտ է պահպանության հատուկ միջոցներ, և պարբերաբար հանդիպող միգրացվող տեսակների գնահատում

- Թռչունների տեսակների համար հատուկ պահպանման տարածքների որոշում և սահմանում (4(1) և (4) հոդվածներ)

- Պահպանության հատուկ միջոցների սահմանում՝ պարբերաբար հանդիպող միգրացվող տեսակները պաշտպանելու համար (4(2) հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 2009/147/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 4 տարվա ընթացքում: |

- Վայրի թռչունների բոլոր տեսակների պաշտպանության ընդհանուր համակարգի ստեղծում, որոնց թվից որսի ենթակա տեսակները հատուկ ենթախումբ են կազմում, և բռնելու/սպանելու որոշակի տեսակների արգելում (5-րդ, 6(1), 6(2) և 8-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 2009/147/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում: |

Խորհրդի 1992 թվականի մայիսի 21-ի 92/43/ԵՏՀ հրահանգ՝ բնական միջավայրերի և կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների պահպանության մասին՝ փոփոխություններով

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

– Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

– Տարածքների ցանկի կազմում, այդպիսի տարածքների սահմանում և դրանց կառավարման գերակայությունների որոշում (ներառյալ «Էմերալդ ցանցի» հնարավոր տարածքների ցանկի կազմումը և այդ տարածքների համար պաշտպանության և կառավարման միջոցների սահմանումը) (4-րդ հոդված)

– Նման տարածքների պահպանության համար պահանջվող միջոցների՝ ներառյալ համաֆինանսավորման սահմանումը (6-րդ և 8-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 92/43/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում: |

– Բնական միջավայրերի և տեսակների պահպանման կարգավիճակի դիտանցման համակարգի ստեղծում (11-րդ հոդված)

– Տեսակների խիստ պահպանության ռեժիմի սահմանում IV հավելվածում թվարկված տեսակների համար՝ Հայաստանի Հանրապետությանը վերաբերող մասով (12-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 92/43/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 7 տարվա ընթացքում: |

– Կրթությունը և հանրությանն ընդհանուր տեղեկատվության տրամադրումը խթանող մեխանիզմի ստեղծում (22-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 92/43/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում։ |

Արդյունաբերական աղտոտում և արդյունաբերական վտանգներ

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 24-ի 2010/75/ԵՄ հրահանգ՝ արդյունաբերական արտանետումների մասին (ներառված աղտոտման կանխարգելում և վերահսկում)

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

– Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

| |
|---|
| Ժամանակացույց. 2010/75/ԵՄ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 4 տարվա ընթացքում։ |

– Այն կառուցվածքների որոշում, որոնց համար թույլտվություն է անհրաժեշտ (I հավելված)

– Թույլտվությունների համակցված համակարգի ստեղծում (4-ից 6-րդ, 12-րդ, 21-րդ և 24-րդ հոդվածներ և IV հավելված)

– Համապատասխանության դիտանցման մեխանիզմի ստեղծում (8-րդ, 14(1)(d) և 23(1) հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 2010/75/ԵՄ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում։ |

- Լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառում՝ հաշվի առնելով Լավագույն հասանելի տեխնոլոգիաների համար ելակետային փաստաթղթերը (14(3)-ից (6) և 15(2)-ից (4) հոդվածներ)

- Այրման կայանների համար արտանետումների սահմանային արժեքների սահմանում (30-րդ հոդված և V հավելված)

- Գոյություն ունեցող կայաններից տարեկան արտանետումների ընդհանուր ծավալի կրճատման ծրագրերի մշակում (գոյություն ունեցող կայանների արտանետումների սահմանային արժեքների սահմանման այլընտրանք) (32-րդ հոդված)

| |
|---|
| Ժամանակացույց. 2010/75/ԵՄ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում՝ նոր կառուցվածքների համար, և սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 13 տարվա ընթացքում՝ գոյություն ունեցող կառուցվածքների համար։ |

Խորհրդի 96/82/ԵՀ հրահանգը փոփոխող և այնուհետ ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2012 թվականի հուլիսի 4-ի 2012/18/ԵՄ հրահանգ՝ վտանգավոր նյութերի առկայությամբ պայմանավորված խոշոր վթարների վտանգների վերահսկման մասին

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները.

- Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

- Համապատասխան մարմինների միջև համակարգման արդյունավետ մեխանիզմների ստեղծում

- Համապատասխան կառուցվածքների մասին տեղեկատվության գրանցման և խոշոր վթարների մասին զեկուցման համակարգերի ստեղծում (14-րդ և 16-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 2012/18/ԵՄ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 4 տարվա ընթացքում: |

Քիմիական նյութերի կառավարում

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2012 թվականի հուլիսի 4-ի թիվ 649/2012 կանոնակարգ (ԵՄ)՝ վտանգավոր քիմիական նյութերի արտահանման և ներմուծման վերաբերյալ

Կիրառվում են սույն կանոնակարգի հետևյալ դրույթները՝

- Արտահանման մասին ծանուցման ընթացակարգի կիրառում (8-րդ հոդված)

- Այլ երկրներից ստացված արտահանման մասին ծանուցումների մշակման ընթացակարգերի կիրառում (9-րդ հոդված)

- Վերջնական կարգավորիչ գործողության վերաբերյալ ծանուցումներ մշակելու և ներկայացնելու ընթացակարգերի սահմանում (11-րդ հոդված)

- Ներմուծման մասին որոշումներ մշակելու և ներկայացնելու ընթացակարգերի սահմանում (13-րդ հոդված)

- Նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառում որոշակի քիմիական նյութերի՝ մասնավորապես Ռոտերդամի կոնվենցիայի III Հավելվածում թվարկված քիմիական նյութերի արտահանման նկատմամբ (14-րդ հոդված)

- Արտահանված քիմիական նյութերին ներկայացվող պիտակավորման և փաթեթավորման պահանջների կատարում (17-րդ հոդված)

- Քիմիական նյութերի ներմուծումն ու արտահանումը վերահսկող ներպետական մարմինների սահմանում (18-րդ հոդված)

Ժամանակացույց. թիվ 649/2012 կանոնակարգի (ԵՄ) սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում:

67/548/ԵՏՀ և 1999/45/ԵՀ հրահանգները փոփոխող և ուժը կորցրած ճանաչող և թիվ 1907/2006 կանոնակարգը (ԵՀ) փոփոխող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1272/2008 կանոնակարգ (ԵՀ)՝ նյութերի և խառնուրդների դասակարգման, պիտակավորման և փաթեթավորման մասին

Կիրառվում են սույն կանոնակարգի հետևյալ դրույթները՝

– Իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

– Նյութերի դասակարգման, պիտակավորման և փաթեթավորման իրականացում

Ժամանակացույց. թիվ 1272/2008 կանոնակարգի (ԵՀ) սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 4 տարվա ընթացքում:

– Խառնուրդների դասակարգման, պիտակավորման և փաթեթավորման իրականացում

Ժամանակացույց. թիվ 1272/2008 կանոնակարգի (ԵՀ) սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 7 տարվա ընթացքում:

---

ՀԱՎԵԼՎԱԾ IV

«ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» V ՄԱՍԻ «ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» 5-ՐԴ ԳԼԽԻ

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է սահմանված ժամկետներում աստիճանաբար մոտարկել իր օրենսդրությունը Եվրոպական միության հետևյալ օրենսդրությանը։

Համայնքի տարածքում ջերմոցային գազերի արտանետումների արտոնագրերի վաճառքի համակարգ սահմանող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 13-ի 2003/87/ԵՀ հրահանգ և Խորհրդի փոփոխող 96/61/ԵՀ հրահանգ

Կիրառվում են սույն հրահանգի հետևյալ դրույթները՝

– Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

– Համապատասխան կառուցվածքների և ջերմոցային գազերի նույնականացման համակարգի ստեղծում (I և II հավելվածներ)

– Դիտանցման, հաշվետվություններ ներկայացնելու, ստուգման և կատարման համակարգերի և հանրային խորհրդակցությունների ընթացակարգերի սահմանում (14-րդ, 15-րդ, 16(1) և 17-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց. 2003/87/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 8 տարվա ընթացքում։ |

«Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003/87/ԵՀ հրահանգի համաձայն ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման և հաշվետվությունների ներկայացման մասին» Հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 21-ի թիվ 601/2012 կանոնակարգ (ԵՄ)

Ժամանակացույց. թիվ 601/2012 կանոնակարգի (ԵՄ) դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 8 տարվա ընթացքում:

«Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003/87/ԵՀ հրահանգի համաձայն ջերմոցային գազերի արտանետումների մասին հաշվետվությունների և տոննա-կիլոմետրի մասին հաշվետվությունների վերահաստատման և վերահաստատողների հավատարմագրման մասին» Հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 21-ի թիվ 600/2012 կանոնակարգ (ԵՄ)

Ժամանակացույց. թիվ 600/2012 կանոնակարգի (ԵՄ) դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 8 տարվա ընթացքում:

Ավիացիոն գործունեության և դրանից առաջացող արտանետումների դեպքում 2003/87/ԵՀ հրահանգի, թիվ 601/2012 կանոնակարգի (ԵՄ) և թիվ 600/2012 կանոնակարգի (ԵՄ) դրույթների կիրարկումը, ինչպես սահմանված է սույն Համաձայնագրով, կախված է Միջազգային քաղաքացիական ավիացիոն կազմակերպության՝ Համաշխարհային շուկայական միջոցների (ՀՇՄ) վերաբերյալ քննարկումների արդյունքներից:

Թիվ 280/2004/ԵՀ որոշումն ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2013 թվականի մայիսի 21-ի թիվ 525/2013 կանոնակարգ (ԵՄ)՝ ներպետական և Միության մակարդակներով կլիմայի փոփոխությանն առնչվող ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման և հաշվետվությունների ներկայացման և այլ տեղեկատվության մասին հաշվետվությունների ներկայացման մեխանիզմի մասին

Կիրառվում են սույն կանոնակարգի հետևյալ դրույթները՝

- Գույքագրման ազգային համակարգի ստեղծում (5-րդ հոդված).
- Քաղաքականությունների, միջոցների և կանխատեսումների ներպետական համակարգի ստեղծում (12-րդ հոդված)

Ժամանակացույց. թիվ 525/2013 կանոնակարգի (ԵՄ) սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 8 տարվա ընթացքում:

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2014 թվականի ապրիլի 16-ի ֆտորացված ջերմոցային գազերի մասին թիվ 517/2014 կանոնակարգ (ԵՄ) և թիվ 842/2006 ուժը կորցրած ճանաչող կանոնակարգ (ԵՄ)

Կիրառվում են սույն կանոնակարգի հետևյալ դրույթները՝

- Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

- Արտանետումների կանխարգելման համակարգի ապահովում (3-րդ հոդված), հոսակորստի ստուգումների կանոնների սահմանում՝ 4-րդ և 6-րդ հոդվածներին համապատասխան, և 6-րդ հոդվածի համաձայն տվյալների վարման համակարգի ստեղծում

- Վերականգնման իրականացման ապահովում՝ համաձայն 8-րդ և 9-րդ հոդվածներով նախատեսված կանոնների

- Համապատասխան անձնակազմին և ընկերություններին ներկայացվող՝ վերապատրաստման և հավաստագրման ներպետական պահանջների սահմանում/համապատասխանեցում (10-րդ հոդված)

- Պիտակավորման համակարգի ստեղծում այն արտադրատեսակների և սարքավորումների համար, որոնք պարունակում են ֆտորացված ջերմոցային գազեր, կամ որոնց գործունեությունը կախված է այդ գազերից (12-րդ հոդված)

- Համապատասխան հատվածներից արտանետումների վերաբերյալ տվյալների ձեռքբերման համար հաշվետվություններ ներկայացնելու համակարգերի ստեղծում (19-րդ և 20-րդ հոդվածներ)

- Կատարման համակարգի ստեղծում (25-րդ հոդված)

Ժամանակացույց. թիվ 517/2014 կանոնակարգի (ԵՄ) սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում:

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 1005/2009 կանոնակարգ (ԵՀ)՝ օզոնային շերտը քայքայող նյութերի մասին

Կիրառվում են սույն կանոնակարգի հետևյալ դրույթները՝

– Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում

– Հսկման ենթակա նյութերի՝ բացառությամբ հատուկ կիրառությունների, և մինչև [2019 թվականի հունվարի 1-ը]՝ հիդրոքլորֆտորածխաջրածինների (ՀՔՖԱ-ների) արտադրության արգելքի սահմանում (4-րդ հոդված)

– Հսկման ենթակա նյութերի արտադրության, շուկայահանման և օգտագործման և բացառություններ կազմող կիրառությունների (որպես հումք, տեխնոլոգիական ազդանյութեր, լաբորատոր և անալիտիկ գործունեության համար էական նշանակության կիրառություններ, հալոնների չափազանց անհրաժեշտ կիրառություններ) և առանձին շեղումների համար՝ ներառյալ արտակարգ իրավիճակներում մեթիլբրոմիդի կիրառությունները (III գլուխ)՝ պայմանների սահմանում

– Հսկման ենթակա նյութերի բացառություններ կազմող կիրառությունների համար ներմուծման և արտահանման լիցենզավորման համակարգի ստեղծում (IV գլուխ) և ձեռնարկությունների՝ հաշվետվություններ ներկայացնելու պարտավորությունների սահմանում (26-րդ և 27-րդ հոդվածներ)

– Հսկման ենթակա օգտագործված նյութերը վերականգնելու, վերամշակելու, ռեգեներացնելու (վերականգնելու) և ոչնչացնելու պարտավորությունների սահմանում (22-րդ հոդված)

– Հսկման ենթակա նյութերի հոսակորուստների դիտանցման և տեսչական ստուգումների ընթացակարգերի սահմանում (23-րդ հոդված)

–

| |
|---|
| Ժամանակացույց. թիվ 1005/2009 կանոնակարգի (ԵՀ) սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում։ |

– Հսկման ենթակա նյութերի շուկայահանման և օգտագործման արգելքի սահմանում՝ բացառությամբ ռեգեներացված ՀՔՖԱ-ների, որոնք կարող են օգտագործվել որպես սառնազդակ մինչև 2030 թվականի հունվարի 1-ը (5-րդ և 11-րդ հոդվածներ)

| |
|---|
| Ժամանակացույց՝ թիվ 1005/2009 կանոնակարգի (ԵՀ) սույն դրույթները ենթակա են կիրարկման մինչև 2030 թվականի հունվարի 1-ը։ |

_____